

From: [Ministry of Diaspora, RA](#)

Date: 12/9/2009 10:31:57 PM

To: armpre@spidernet.com.cy

Cc: admin@melkonianforever.org; office@armenianmp.com; vmahdessian@parliament.cy

Subject: From the Ministry of Diaspora, RA

Հարգելի հայրենակիցներ,

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության կարևորագույն խնդիրներից է նեցուկ կանգնել Սփյուռքում գործող հայկական կրթօջախներին ու նախակրթարաններին՝ օժանդակելով նրանց ուսումնական գրականություն և ուսումնաօժանդակ նյութեր ձեռք բերելու, ուսուցիչների վերապատրաստման, Սփյուռքի համար մասնակավարժական և մասնագիտական կադրերի պատրաստման գործընթացներում, ինչպես նաև այդ կրթօջախներին մասնակից դարձնել ով մեր կողմից նախատեսված մի շարք կրթամշակութային ծրագրերին:

Նպատակ ունենալով նպաստել հայրենիքից դուրս գտնվող հայ երեխայի հայեցի կրթության ու դաստիարակության գործին, մենք ուսումնասիրում ենք յուրաքանչյուր հայ համայնքում լեզվական իմացության վիճակը, կրթօջախների խնդիրները և միջոցներ ենք ձեռնարկելու դրանց լուծման ուղղությամբ: Համոզված ենք, որ համատեղ ուժերով մենք կարող ենք պայքարել սփյուռքահայության լեզվամշակութային ուժացման դեմ, նախաձեռնել և իրագործել հայապահպանությանն ուղղված բազմաթիվ այլ ծրագրեր:

ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ ՀՀ սփյուռքի նախարարությունը շարունակում է Սփյուռքի կրթօջախներին ուսումնական գրականություն և օժանդակ նյութեր տրամադրելու ծրագիրը, իսկ 2010 թվականից նախարարությունը պետք է իրականացնի գրքերի առաքումը: Դասագրքերի հրատարակումը և դրանց առաքումը կրթօջախներին կկատարվի Ձեր կողմից ներկայացվող հայտերի հիման վրա:

Ուստի, խնդրում ենք Ձեր աջակցությունը՝ համայնքի կրթական կառույցներում տարածելու առաջարկվող դասագրքերի և օժանդակ նյութերի ցանկը, ինչպես նաև գործող կրթօջախների մասին հարցաթերթիկը: Խնդրում ենք հայտերն ու լրացված հարցաթերթիկները ուղարկել ՀՀ սփյուռքի նախարարություն:

Հարգանքով՝

Հարգանքով՝

ՀՀ սփյուռքի նախարարություն

Էլ.փոստ՝ europedep@mindiaspora.am ; europedep@yahoo.fr allarmenian@mindiaspora.am

Հեռ.՝ (+37410) 585601 #117

Ֆաքս՝ (+37410) 589157